<u>5.Հարցում կատարելու մասին</u>

(Մ.Մարգարյան)

ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashknen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

<u>6. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին</u>

(Մ.Մարգարյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

<u>7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

(Մ.Մարգարյան)

ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնահատման արդյունքների ամփոփման օ օրը <<Թիվ 17 պոլիկլինիկա>> ՓԲԸ, հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 36ա տնօրենի ընդունարան հասցեով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Մարգարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Քոթանյան
Ա.Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան